Տարեկան հաշվետվություն 2021

Կազմակերպության մասին

«Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպության նպատակն է հասարակության իրազեկումը և հանրության տեղեկացվածության մակարդակի բարձրացումը, հանրության մասնակցության խթանումը հանրային նշանակություն ունեցող ոլորտներում և որոշումների կայացման գործընթացում, ինչպես նաև ժողովրդավարական արժեքների ու բարեփոխումների առաջմղումը: Մեր համոզմամբ՝ պետական և հանրային նշանակություն ունեցող ոլորտներում հանրության տեղեկացվածության մակարդակի բարձրացումը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական և անբաժանելի բաղադրիչն է:

«Իրազեկ քաղաքացիների միավորման» հետազոտություններն ու հրապարակումները վերաբերում են արտաքին քաղաքականությանն ու դրան առնչվող հարցերին, ժողովրդավարական արժեքներին, տնտեսությանը, անվտանգության ոլորտին, ընտրություններին, բարեփոխումներին, ինչպես նաև քաղաքացիների իրավունքներին:

Կազմակերպությունն աշխատանքներ է իրականացնում՝ ուղղված Հայաստանում լրագրողական դաշտի ունակությունների բարձրացմանը, ինչպես նաև իրականացնում է լրատվական գործունեություն՝ ապատեղեկատվության դեմ պայքարող «Փաստերի ստուգման հարթակի» միջոցով:

«Իրազեկ քաղաքացիների միավորումը» իր գործընկերների հետ միասին ակտիվորեն ներգրավված է Հայաստանում ընտրությունների որակի բարձրացման գործընթացին՝ թե՛ դիտորդական առաքելության և թե՛ դրան նախորդող գործընթացների վրա ազդեցության միջոցով:

Կազմակերպությունն իր ակտիվ մասնակցությունն է ունենում մի շարք ժողովրդավարական բարեփոխումների առաջմղմանը, հանրության շրջանում դրանց պահանջի ձևավորմանը և փաստաթղթերի նախագծմանը:

Մենք չենք ներկայացնում որևէ քաղաքական կուսակցության կամ այլ խմբի շահեր:

Բովանդակություն

- Անձնակազմ
- Գործընկերներ
- Գործունեություն
- Ֆինանսավորում

Աշխատակիցներ

Դանիել Իոաննիսյան
ծրագրերի համակարգող

Աշխեն Մուշեղյան
գործադիր տնօրեն

Փիրուզա Պետրոսյան
ֆոնդահայթայթման մասնագետ

Լիլիթ Ղազարյան
գործադիր օգնական

Արտաշես Սերգոյան
հետազոտող

Վաղարշ Աղաբեկյան
իրավապահ համակարգի փորձագետ

Տիգրան Գրիգորյան
ծրագրի պատասխանատու

Փայլակ Կարապետյան
հաշվապահ

Անի Գրիգորյան
գլխավոր խմբագիր

Նելլի Լազարյան
լրագրող

Սևադա Ղազարյան
լրագրող

Հովհաննես Նազարեթյան
լրագրող

Անի Ավետիսյան
լրագրող

Լուսինե Ոսկանյան
լրագրող

Մանե Մարտիրյան
թվային մարկետինգի
մասնագետ

Վահե Ղուկասյան
խմբագիր

Շուշան Հարությունյան
թարգմանիչ

Քրիստինե Գորոյան
թարգմանիչ

Խորեն Գրիգորյան
վիդեոմոնտաժող,
օպերատոր

Արուսիկ Ոսկանյան
մեդիա մոնիտորինգի համակարգող

Գայանե Գասոյան
մեդիա մոնիտորինգի մասնագետ

Միեր Թարոյան
մեդիա մոնիտորինգի մասնագետ

Հայկ Հովհաննիսյան
լրագրող

Նանե Մանասյան
լրագրող, հաղորդավար

Շուշան Ստեփանյան
լրագրող

Գործընկերներ

The U.S. Embassy in Armenia

Freedom House

NED National Endowment for Democracy

Supporting freedom around the world

International Republican Institute IRI

advancing democracy worldwide

OPEN SOCIETY FOUNDATIONS

oxYGen

EMPOWERING WOMEN AND YOUTH

«Փաստերի ստուգման հարթակի» գործունեությունը

Պայմանավորված հետպատերազմական շրջանով՝ ապատեղեկատվական հոսքերի ակտիվությունը հասել էր գագաթնակետին. հայաստանյան տեղեկատվական դաշտում մեծացել էր նաև կեղծ տեղեկատվություն գեներացնող արտահայաստանյան կենտրոնների ու տելեգրամ ալիքների դերը: «Փաստերի ստուգման հարթակն» արդյունավետորեն պայքարել է ապատեղեկատվական հոսքերի դեմ, ինչպես նաև բացահայտել կեղծ լուրեր ու քարոզչական թեզեր գեներացնող և տարածող կենտրոններին:

Փաստերի ստուգման թիմն ապացուցել է, որ ի հեճուկս ադրբեջանական կողմի պնդումներին՝ Արցախում իրականացվում է մշակութային ժառանգության, հուշարձանների ոչնչացում, վանդալիզմ, ինչպես նաև աննախադեպ աճել է ատելության խոսքը:

FIP.am-ը բազմաթիվ հրապարակումներ ունեցավ տարբեր պաշտոնյաների նախկին ու ներկա հայտարարությունների ու դրանց միջև առկա հակասությունների վերաբերյալ: Ցույց տվեց, որ ըստ քաղաքական նպատակահարմարության՝ դրանք կարող են էականորեն տարբերվել նախկինում արված պնդումներից, դրանով զերծ պահելով ընթերցողին նմանատիպ մանիպուլյացիաներին տրվելուց: Ուսումնասիրեց և բացահայտեց հանրությանը անհայտ պայմանավորվածությունների արդյունքում Հայաստանի տարածքից ճանապարհային հատվածներ զիջելու դեպքեր:

2021թ. ընթացքում լրագրողները այցելեցին հանրապետության սահմանամերձ շրջաններ, կատարեցին տեղորոշումներ և փաստեցին, որ ի հակադրություն Ադրբեջանի պնդումների՝ վերջինիս ԶՈՒ մի քանի կմ

խորությամբ ներխուժել են Հայաստանի սուվերեն տարածք, դիրքավորվել և կառուցել ենթակառուցվածքներ երկարաժամկետ տեղակայման համար:

Այս ամենից զատ՝ փաստերի ստուգման թիմը բացահայտեց մի քանի քաղաքական ուժերի և գործիչների կողմից ստեղծված ու ղեկավարվող ֆեյք օգտահաշիվների բանակներ, ինչպես նաև բացահայտեց երկրում պատերազմից անմիջապես հետո ստեղծված ու մեծ տեմպերով զարգացող տելեգրամ ալիքներից մեկի հետևում կանգնած ուժերին:

Ուսումնասիրեց բազմաթիվ ներկա ու նախկին պաշտոնյաների ունեցվածքներն ու հայտարարագրերը, բացահայտեց մի շարք կոռուպցիոն բնույթի գործարքներ, չհայտարարագրված գույք, կապեր: Սրանց թվում էին ինչպես նախկին ու ներկա բարձրաստիճան պաշտոնյաներ, այնպես էլ դատավորներ, քննչական մարմինների ներկայացուցիչներ, ընտանիքի անդամներ, փոխկապակցված անձինք:

Փաստերի ստուգման թիմն իրականացրել մի շարք հետաքննություններ, որոնց մի մասի հիման վրա հարուցվեցին քրեական գործեր, պաշտոնից ազատվեցին մի քանի անձինք, բացահայտվեցին կոռուպցիոն գործարքներ:

Տարին նշանավորվեց նաև արտահերթ խորհրդարանական ընտրություններով: Այս շրջանում FIP.am-ը ուսումնասիրեց մի քանի տասնյակ համայնքներում ՏԻՄ-երի հազարավոր որոշումներ, պարզեց, որ որոշ համայնքներում ընտրողներին ֆինանսական աջակցություն տրամադրելու անվան տակ համայնքների ղեկավարները վարչական ռեսուրս են կիրառում: Բացի դրանից բացահայտեց վարչական լծակների կիրառման այլ դեպքեր ևս: Ցույց տվեց ընտրված համայնքապետերի կալանավորումների ու իշխանության ներկայացուցիչների պարտությունների միջև կապերը:

«Փաստերի ստուգման հարթակի» բազմաթիվ հրապարակումներ արտատպվել և վերահրապարակվել են տարբեր լրատվական կայքերի կողմից, մի շարք պաշտոնյաներ տարբեր ամբիոններից իրենց ելույթներում հղում են արել Հարթակի հրապարակած նյութերին, իսկ թիմի անդամները բազմիցս մասնակցել են տարբեր հաղորդումների և ռեպորտաժների, հանրային քննարկումների, հարցազրույցների և այլ ձևաչափերով իրենց

կատարած աշխատանքի վերաբերյալ մեկնաբանություններ տվել տարբեր լրատվամիջոցների:

Հակազդեցություն COVID-19 համավարակին



«Փաստերի ստուգման հարթակը» 2021-ի առաջին ամիսներին շարունակել է անդրադառնալ համավարակի ընթացքում լայն տարածում գտած ապատեղեկատվությանն ու միֆերին, ինչպես նաև պարզաբանող հոդվածներ է հրապարակել վարակի տարատեսակ դրսևորումների վերաբերյալ: Միջազգային հանրապետական ինստիտուտի (ՄՀԻ) աջակցությամբ իրականացվեց «COVID-19-ի շուրջ ապատեղեկատվությանը հակազդելու ծրագիրը», որը միտված էր բարձրացնելու համավարակի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը և առավել արդյունավետ դարձնելու համավարակի շուրջ տարածվող ապատեղեկատվության դեմ պայքարը: Այս նպատակով ստորագրվեց համապատասխան հուշագիր



ՀՀ առողջապահության նախարարության և վերոնշյալ ծրագրի բաղկացուցիչներն իրականացնող գործընկերների՝ «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ-ի, «Սիվիլիթաս» հիմնադրամի, Հանրային լրագրություն ակումբի, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի և «Իրազեկ քաղաքացիների միավորման» միջև: Ծրագրի իրականացումը հատկապես կարևոր էր երկրում COVID-19-ի ցուցանիշների աճի համատեքստում և պատվաստումային գործընթացի վերաբերյալ հավաստի տեղեկատվություններ տարածելու ուղղությամբ:

Ինտերակտիվ քարտեզ

«Իրազեկ քաղաքացիների միավորումը», նպատակ ունենալով խթանել Հայաստանի արտաքին քաղաքականության լուսաբանումն ու հանրության շրջանում երկրի արտաքին քաղաքականության վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը, պատրաստել է հատուկ ինտերակտիվ քարտեզ:



Արտաքին քաղաքականության ինտերակտիվ քարտեզը ներկայացնում է Հայաստանի արտաքին հարաբերությունները՝ աշխարհի բոլոր երկրների հետ, մասնավորապես դիվանագիտական և տնտեսական: Բացի այդ քարտեզը հնարավորություն է ընձեռում տեղեկատվություն ստանալ երկրների բնակչության, տնտեսության և ազատության ինդեքսի մասին:

Հանրահավաքների մասնակիցների հաշվարկ

2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո Հայաստանում սկիզբ առած ներքաղաքական շարժումները շարունակվեցին նաև 2021 թվականի ընթացքում: Մասնավորապես մինչ արտահերթ խորհրդարանական ընտրությունները ընդդիմության կողմից պարբերաբար կազմակերպվում էին հանրահավաքներ: «Իրազեկ քաղաքացիների միավորումն» այդ ընթացքում իրականացրել է հանրահավաքների մասնակիցների հաշվարկ՝ կանխելով հավաքների մասնակիցների քանակի շուրջ մանիպուլյացիաներն ու շահարկումները:

Լրագրողների վերապատրաստում

2021 թ-ի ընթացքում Իրազեկ քաղաքացիների միավորումը ակտիվորեն շարունակել է լրագրողների վերապատրաստմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը:

Շարունակելով Հայաստանի արտաքին քաղաքականությանը նվիրված միջոցառումների շարքը՝ տարեսկզբին կայացավ «Արտաքին քաղաքականություն և լուսաբանում. 44-օրյա պատերազմ» խորագրով սեմինար-քննարկումը՝ նվիրված Արցախյան պատերազմի պատճառների և հետևանքների վերլուծությանը:

Կարևորելով բարեփոխումների վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացումը՝ ԻՔՄ-ն լրագրողների համար կազմակերպեց մի շարք սեմինարներ նվիրված ընթացիկ բարեփոխումներին.

- «Ինչպես «կարդալ» բարեփոխումները. ընտրություններ, կուսակցություններ, ոստիկանություն»,
- «Ընտրական կարգավորումներ և բարեփոխումներ»,
- «Հակակոռուպցիոն բարեփոխումների ընթացքը Հայաստանում»,
- «Ոստիկանության բարեփոխումներ. ընթացքն ու մարտահրավերները»:

Աշնանը կազմակերպվեց «Ապատեղեկատվություն ու բարեփոխումներ» խորագրով միջոցառումը՝ թվային հեղինակությունների (digital influencer) համար, որի ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեցամ համալրել իրենց մեդիագրագիուտության գիտելիքները, ծանոթանալ ապատեղեկատվության դեմ պայքարի

գործիքակազմին (փաստերի ստուգում, համացանցում կեղծ օգտահաշիվների բացահայտում և այլն), ինչպես նաև ընթացիկ բարեփոխումներին և դրանց շուրջ տարածվող մանիպուլյացիաներին և ապատեղեկատվությանը: Միջոցառման ձևաչափը թույլ տվեց մասնակիցներին փոխանակվել իրենց փորձառությամբ և կապեր հաստատել միմյանց, ինչպես նաև քաղհասարակության ներկայացուցիչների հետ:

Ամփոփելով հետպատերազմական տարին տարեվերջին կայացավ «Արտաքին քաղաքականություն և լուսաբանում» շարքի 12-րդ սեմինար-քննարկումը՝ «Պատերազմից մեկ տարի անց. իրողություններ և մարտահրավերներ» խորագրով, որի ընթացքում խորքային քննարկումներ ծավալվեցին ինչպես Արցախյան հակամարտության, այնպես էլ Հայաստանի և տարածաշրջանի առջև ծառացած մարտահրավերների շուրջ:

Հանրային քննարկումներ

Տարեսկզբին Իրազեկ քաղաքացիների միավորումը կազմակերպեց «Ոստիկանության բարեփոխումները և Ներքին գործերի նախարարության ստեղծումը» թեմայով հանրային քննարկում՝ Արդարադատության նախարարության, ոստիկանության, ինչպես նաև քաղհասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ:

Ապրիլին կազմակերպվեց «Ընտրական բարեփոխումների ամբողջական ընդունման անհրաժեշտությունը» թեմայով հանրային քննարկում՝ խորհրդարանական և արտախորհրդարանական քաղաքական ուժերի մասնակցությամբ, որի ընթացքում անդրադարձ եղավ ընտրական բարեփոխումներին և Ընտրական օրենսգրքի փոփոխությունների ամբողջական փաթեթի ընդունման շուրջ հարցերին:

Մայիսին կայացավ նաև «Սահմանային ճգնաժամի հանգուցալուծման հայաստանյան քաղաքական ուժերի պատկերացումները» թեմայով քննարկումը, որին մասնակցում էին արտահերթ ընտրություններին մասնակցած քաղաքական ուժերի ներկայացուցիչներ: Քննարկվեցին Հայաստանի առջև ծառացած աշխարհաքաղաքական խնդիրները և Հայաստանի սուվերեն տարածք ադրբեջանական զորքերի ներխուժման պատճառով ստեղծված պայթյունավտանգ իրավիճակը և հնչեցին դաշնակցային հարաբերությունների մասին հարցեր, մոտեցումներ և կարծիքներ:

Ուսանողական ֆորումներ

«Հայաստանում ժողովրդավարական մշակույթի առաջմղում» ծրագրի շրջանակներում ԻՔՄ-ն կազմակերպեց ճանաչողական այցեր և հանդիպումներ Հայաստանի ԲՈՒՀ-երի ուսանողների համար՝ ընթացիկ բարեփոխումների գործընթացին ծանոթանալու նպատակով:

Վանաձոր քաղաքում կայացավ «Ընտրական բարեփոխումներ և կուսակցությունների մասին օրենք» խորագրով հանրային քննարկումը Վանաձորի պետական համալսարանի ուսանողների հետ, որոնք հնարավորություն ունեցան իրենց հարցերն ուղղել ընտրական բարեփոխումների գործընթացում ներգրավված պետական պաշտոնյաներին:

Կապան քաղաքում Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղի ուսանողների համար կազմակերպվեց հանրային քննարկում՝ ոստիկանության բարեփոխումների վերաբերյալ:

Կազմակերպվեցին ճանաչողական այցեր ՀՀ ոստիկանության ակադեմիա՝ Վանաձորի պետական համալսարանի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի, Գավառի պետական համալսարանի ուսանողների համար: Վերջիներս ներկա գտնվեցին ապագա պարեկային ծառայողների վարժանքներին:

Ինչպես նաև նորաստեղծ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողների համար, որի ընթացքում նրանք ծանոթացան հանձնաժողովի կառուցվածքին, գործունեությանը, ինչպես նաև պետական ռազմավարությանը կոռուպցիայի դեմ պայքարում: ԵՊՀ ուսանողների համար կայացավ նաև դատարիրավական համակարգում իրականացվող բարեփոխումներին նվիրված հանրային քննարկումը, որին ներկա էր նաև Արդարադատության նախարարը:

Ընտրություններ

2021թ-ի ընթացքում կազմակերպությունը «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի շրջանակներում իրականացրեց դիտորդական առաքելություն հունիսի 20-ին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրությունների, ինչպես նաև աշնանը տեղի ունեցախ ՏԻՄ ընտրությունների ընթացքում: ԻՔՄ-ն իրականացրեց նաև մշտադիտարկում քարոզարշավի շրջանում՝ որակական և քանակական: Կազմակերպությունը ընտրություններին ընդառաջ իրականացրեց հանրային իրազեկման արշավ. պատրաստվեցին տեսանյութեր՝ ընտրակարգի և ընտրողների իրավունքների վերաբերյալ, որոնք ակտիվորեն տարածվեցին մարզային և համապետական սփռում ունեցող հեռուսաալիքներով, ինչպես նաև տեղադրվեցին վահանակներ և փակցվեցին պաստառներ, որոնք միտված էին ընտրակաշառքի դեպքերի և քաղաքական ուժերի կողմից ընտրողների նկատմամբ ճնշումների կանխարգելմանը:

Կազմակերպության անդամները երկու շրջիկ խմբերով դիտարկեցին նաև Վրաստանում հոկտեմբերի 2-ին կայացած համայնքային ընտրությունները՝ ծանոթանալով Վրաստանի ընտրական օրենսգրքի առանձնահատկություններին, ինչպես նաև Թբիլիս քաղաքում փորձարկվող քվեաթերթիկների էլեկտրոնային հաշվարկի սարքերին:

Բարեփոխումների առաջմղում

Ոստիկանություն

Կազմակերպությունը շարունակել է մշտադիտարկել ոստիկանության բարեփոխումների ընթացքը և հանդես եկել առաջարկություններով և դիտարկումներով: Նշենք, որ Դանիել Իոաննսիյանը հանդիսանում է ոստիկանության բարեփոխումների համակարգող խորհրդի անդամ, ինչը հնարավորություն է տալիս առկա խնդիրների մասին բարձրաձայնել որոշումների կայացման ամենաբարձր մակարդակում: Մասնավորապես, կազմակերպության առաջարկությամբ ստեղծվել է ոստիկանության բարեփոխումների աշխատանքային խումբ, որում ներգրավված են բարեփոխումների հետ առնչություն ունեցող պետական մարմինների ներկայացուցիչներ, ինչպես նաև քաղհասարակության և միջազգային աջակից կազմակերպությունների անդամներ: Աշխատանքային խմբի կազմում կազմակերպությունը բարձրաձայնել է մի շարք խնդիրների մասին և առաջարկել լուծումներ:

2021թ.-ին կազմակերպության ներկայացուցիչները ներգրավված են եղել Լոռու և Շիրակի պարեկային ծառայողների ընդունելության հարցազրույցների հանձնաժողովներում:

Սահմանադրական

Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը, որում ներգրավված էր նաև կազմակերպությունը, փաստացի դադարել է իր գործունեությունը դեռևս 2020թ.-ին: Պայմանավորված հետպատերազմական և ներքաղաքական իրավիճակով՝ հանձնաժողովը 2021թ.-ին ևս չվերսկսեց իր աշխատանքերը:

2021թ.-ի վերջին սկսվեց նոր Սահմանադրական բարեփոխումների խորհրդի ձևավորման գործընթացը, ինչի վերաբերյալ կազմակերպությունը ներկայացրեց 7 կետից բաղկացած առաջարկությունների փաթեթ, որոնք ընդունվեցին: Առաջարկները վերաբերում էին խորհրդի և հանձնաժողովի դերերին, մասնավորապես այն, որ սահմանադրական բարեփոխումների բովանդակության գեներացիան պետք է իրականացնի խորհուրդը, որը պետք է նաև ապահովի հանրային մասնակցայնությունը գործընթացին:

Հանձնաժողովը, պետք է իրավաբանական աջակցությամբ սպասարկի խորհրդի առաջարկները՝ ձևակերպի խորհրդի սահմանած հայեցակարգային ուղղություններն ու խորհրդի հաստատած հայեցակարգի հիման վրա պատրաստի սահմանադրական փոփոխությունների նախագիծը:

Ընտրական

2021թ.-ին կազմակերպությունը շարունակել է ընտրական օրենսդրության շուրջ իր աշխատաքները՝ գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ հանդես է եկել մի շարք առաջարկներով, որոնք վերաբերել են ընտրական օրենսգրքին և հարակից օրենքերին: Առաջարկությունների զգալի մասն ընդունվել է, դրանք մասնավորապես ներառված են «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, քրեական, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքերում:

Կազմակերպության ներկայացուցիչները տարբեր հանդիպումներ են ունեցել միջազգային կառույցների, մասնավորապես Վենետիկի հանձնաժողովի ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով Հայաստանում ընտրական գործընթացների մանրամասները, ինչպես նաև բարեփոխումների ընթացքը:

Հակակոռուպցիոն

2021թ.-ին ՀՀ-ում սկսեց գործել Հակակոռուպցիոն կոմիտեն, որն իրավապահ համակարգում նոր կառույց է և զբաղվում է կոռուպցիոն հանցագործությունների բացահայտմամբ: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար ձևավորվել է մրցութային խորհուրդ, որի կազմում ներգրավված է նաև քաղհասարակությունը ի դեմս Իրազեկ քաղաքացիների միավորման:

Կազմակերպությունը նաև ներգրավված է հակակոռուպցիոն բարեփոխումների խորհրդում, որի շրջանակներում կազմակերպության առաջարկով ստեղծվել է հակակոռուպցիոն աշխատանքային խումբ՝ առավել հրատապ հարցերի քննարկման նպատակով: Կազմակերպության ներկայացուցիչ Վաղարշ Աղաբեկյանը ընտրվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների ընտրության մրցույթային հանձնաժողովի կազմում որպես քաղհասարակության ներկայացուցիչ:

REFORMS

2018թ.-ից հետո ՀՀ-ում սկիզբ առած մի շարք ոլորտային փոփոխություններ ունեին լուսաբանման խնդիր: Բովանդակային առումով դրանք հասանելի և մատչելի էին լինում հիմնականում մասնագիտական շրջանակների համար: 2021թ.-ին կազմակերպության կողմից ստեղծվեց www.reforms.am կայքը, որը միտված է ընթացիկ բարեփոխումները դարձնել հասանելի հանրության լայն շերտերի համար՝ դրանք ներկայացնելով ավելի պարզ և հանրամատչելի ձևակերպումներով: Կայքը կարող է ծառայել որպես ուղեցույց և հնարավորություն է տալիս քաղաքացիներին ծանոթանալ 21 ոլորտային բարեփոխումների ընթացքին՝ ստանալով տեղեկատվություն կատարվող փոփոխության, ժամկետների, ինչպես նաև ոլորտային դերակատարների կարծիքների վերաբերյալ:

Եկամուտների և ծախսերի հաշվետվություն

N	2021թ. ֆինանսական միջոցները՝ ըստ դոնորների		USD
1	Ազատության տուն, Վաշինգտոն	Բալանս	2064
		Եկամուտ	56999
2	Միջազգային հանրապետական ինստիտուտ, Վաշինգտոն	Բալանս	0
		Եկամուտ	4000
3	Ժողովրդավարության ազգային հիմնադրամ, Վաշինգտոն	Բալանս	3919
		Եկամուտ	157500
4	Բաց տեղեկատվության համագործակցություն, Լոնդոն	Բալանս	1661
		Եկամուտ	4789
5	Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան, Երևան	Բալանս	1429
		Եկամուտ	117505
6	Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան, Երևան	Բալանս	4373
		Եկամուտ	0
7	ՕՔՍԵՋԵՆ հիմնադրամ, Երևան	Բալանս	0
		Եկամուտ	45510
8	Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոն, Պրահա	Բալանս	18134
		Եկամուտ	5909
9	Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոն, Պրահա	Բալանս	0
		Եկամուտ	12173
10	Հայաստանում ԱՄՆ դեսպանություն, Երևան	Բալանս	20524
		Եկամուտ	18435
11	Հայաստանում ԱՄՆ դեսպանություն, Երևան	Բալանս	0
		Եկամուտ	43850
			518774

N	2021թ. ծախսերը՝ ըստ իրականացված ծրագրերի		USD
1	Հայաստանում ժողովրդավարական մշակույթի առաջմղում	Ծախսեր	71366
2	Հակազդեցություն COVID-19-ին առնչվող ապատեղեկատվությանը	Ծախսեր	3342
3	Արտաքին քաղաքականության և ժողովրդավարական բարեփոխումների շուրջ հանրային քննարկումների խթանում	Ծախսեր	138242
4	Չարամիտ տեղեկատվական գործողությունների բացահայտում Հայաստանում՝ ԻՔՄ-ի հետաքննական կարողությունների զարգացման միջոցով	Ծախսեր	6450
5	Հանրային նշանակության հարցերի փաստահեն ընկալման զարգացում՝ ապատեղեկատվություններին և մանիպուլյացիաներին հակազդելու միջոցով	Ծախսեր	105755
6	Հայաստան-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) հաշվետու կատարման ապահովում	Ծախսեր	4373
7	Արտահերթ ընտրություններ 2021. տեղական դիտորդություն և քաղաքացիների իրավազորում	Ծախսեր	42779
8	Փաստահեն տեղեկատվության խթանում՝ լրագրողական հետաքննությունների միջոցով	Ծախսեր	20923
9	Ավելի լավ ընտրություններ՝ ընտրողների կրթության միջոցով	Ծախսեր	12173
10	Բարեփոխումների թափանցիկության բարձրացում հանրության ներգրավվածության միջոցով	Ծախսեր	38958
11	Ապատեղեկատվության դեմ պայքար Հայաստանում	Ծախսեր	14596
			458957